Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

BY NC SA

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material



Հ. Ի. ՇԱՄՇԻՆՅԱՆ
1856—1914

# Կ Ա Տ Ա Լ Ո Գ

Ե Ր Ե Վ Ա Ն

ГЛАВНОЕ УПРАВЛЕНИЕ ПО ДЕЛАМ ИСКУССТВ МИНИСТЕРСТВА
КУЛЬТУРЫ АРМЯНСКОЙ ССР.
ГОСУДАРСТВЕННАЯ КАРТИННАЯ ГАЛЕРЕЯ АРМЕНИИ

# КАТАЛОГ

# ВЫСТАВКИ

# А. И. ШАМШИНЯНА

(К 40-ЛЕТИЮ СО ДНЯ СМЕРТИ).

ЕРЕВАН

1954

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ ՄԻՆԻՍՏՐՈՒԹՅԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԳՈՐԾԵՐԻ
ԳԼԽԱՎՈՐ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏԿԵՐԱՍՐԱՀ

Б
4531

# Հ. Ի. ՇԱՄՇԻՆՅԱՆԻ

# ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻ

# Կ Ա Տ Ա Լ Ո Գ

(ՄԱՀՎԱՆ 40-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ)

ԵՐԵՎԱՆ

1954

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀՍՍՀ-Арм. ССР
им. А. Мясникяна
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎ.
35834-65

40 տարի առաջ, 1914 թ. փետրվարի 4-ին նյութական անապահով վիճակում, ժամանակից շուտ ծերացած, 58 տարեկան հասակում մեռավ 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ կերպարվեստի աչքի ընկնող դեմքերից մեկը՝ Հարություն Շամշինյանը:

Մեծ չէ Շամշինյանի թողած ստեղծագործական ժառանգությունը՝ մի քանի տասնյակ ավարտված նկարներ, հարյուրի մոտ էտյուդներ, գծանկարներ, չիրականացված կոմպոզիցիաների էսքիզներ:

Ծանրաբեռնված լինելով մանկավարժական աշխատանքով, Շամշինյանը չի կարողացել սիստեմատիկ ու հարատև զբաղվել արվեստով: Նրա ստեղծագործական շատ փայլուն մտահղացումների մասին մենք կարողանում ենք գաղափար կազմել միայն հապճեպ կատարված էսքիզների միջոցով: Նկարիչ-քաղաքացու լայն մտահորիզոնի և նրա դեմոկրատական-առաջավոր հայացքների մասին մեզ գունեղ կերպով պատմում են նրա մեծ ներշնչմամբ կատարված էտյուդներն ու ճեպանկարները:

Մանկության առաջին իսկ տարիներից հոգսը և նյութական անապահով վիճակը եղել են նկարչի կյանքի ուղեկիցները: Նա վաղ է սկսել աշխատել և ամբողջ կյանքի ընթացքում սիրել է աշխատանքը և աշխատավոր մարդուն: Շարժական ցուցահանդեսների նկարիչների ընկերության գործունեության ամենափայլուն շրջանում սովորելով Պետերբուրգում, Գեղարվեստների Ակադեմիայում, նա մոտիկից ծանոթանում է պերեդվիժնիկների արվեստի հետ: Սովորելով Ակադեմիայում, մեծ մանկավարժ նկարիչ Պ. Պ. Չիստյակովի մոտ, նա խորապես ուսումնասիրում է ռեալիստական արվեստի հիմունքները: 1883 թ. փայլուն կերպով ավարտելով Ակադեմիայի լրիվ դասընթացը, Շամշինյանը հնարավորություն չի ունենում մասնակցելու ոսկյա մեդալի կոնկուրսին և տեղափոխ-

վում է մշտական բնակության իր ծննդավայրը՝ Թիֆլիզ, ուր և ապրում ու աշխատում է մինչև իր կյանքի վերջը:

Նկարչից մեզ հասած վաղ շրջանի աշխատանքներից մեկը ծավալով ոչ մեծ «Դեղատան վաճառասեղանի առաջ» էսքիզն է (1883 թ.), որտեղ գեղարվեստական մեծ ընդհանրացումով պատկերված է մենակությունը և անամոք վիշտը: Նկարը իր գաղափարական բովանդակությամբ շատ մոտ է ռուս ականավոր կենցաղագիրներ Ֆեդոտովի և Պերովի ստեղծագործություններին: Ինչպես ռուս մեծ կենցաղագիրները, այնպես և նրանց հետևորդ Շամշինյանը, ոչ թե արձանագրում է փաստը, այլ հանդես է բերում դեպի այդ փաստը իր որոշակի ստեղծագործական մոտեցումը: Հիմնականում պատկերելով աշխատավոր մարդկանց՝ արհեստավորների կյանքն ու կենցաղը, նա որոշակիորեն դրսևորում է իր սերն ու համակրանքը նրանց նկատմամբ: Նա տանջվում է իր հերոսների հետ և միաժամանակ նրանց հետ անսահմանորեն ուրախանում ժողովրդական ինքնաբուխ տոնակատարությունների ժամանակ: Նա իր աշխատանքներում սիրով, բայց և միաժամանակ ներքին մեծ դառնությամբ է պատկերում աղքատ մաշակարներին, ջրկիրներին, գյուղացիներին, ձկնորսներին ու ծառաներին: Պատկերելով նրանց դառն վիճակը, նկարիչը հավատում է նրանց ուժին:

Շամշինյանի ստեղծագործության մեջ մեծ տեղ են գրավում նաև ժողովրդական տոնակատարությունները: Այդ աշխատանքների բազմակողմանի ուսումնասիրումը ցույց է տալիս, որ նկարիչը ոչ միայն այդ տոնակատարությունների արտաքին կողմն է նշմարտացի պատկերում, այլև հանդես է բերում որոշակի քննադատական մոտեցում:

Չափազանց ուշագրավ է 1893 թ. կատարված նշանավոր «Ղեյնոբա» նկարը: Ամբողջ նկարը փաստորեն կառուցված է կոնտրաստների վրա, որոնք նկարին տալիս են ներքին դինամիկա և հնարավորություն են տալիս նկարչին դիմակահանդեսին մասնակից իր զգեստավորված հերոսների հետ միասին ծիծաղելու հարուստ ու ինքնագոհ վաճառականի վրա՝ նշմարտացիորեն ցույց տալով երկու Թիֆլիզի՝ աշխատավոր ու շահագործող Թիֆլիզի պատկերը: Առհասարակ երկու Թիֆլիզների հակադրումը, որի ժամանակ միշտ զգացվում է նկարչի ծաղրը ունևորների և հա-



մակրանքը աշխատավորների նկատմամբ, բավականին մեծ տեղ է գրավում Շամշինյանի ստեղծագործությունների մեջ:

Այդ մենք տեսնում ենք և 1887 և 1890 թթ. կատարված երկու մեծ նկարներում՝ «Շեյթան բազարը» (քահանայի, մոլլայի, աստիճանավորի կերպարները) և «Հին Թիֆլիզը» (արհեստավորների հոգնատանջ դեմքերը և ընդհակառակը վաճառականի և ուղտի վրա նստած անվանի մարդու ինքնագոհ բթամտությունը): Այդ նկատվում է և նկարչի վերջին խոշոր աշխատանքում՝ 1913 թ. կատարված՝ «Տուն վերադառնալը Թիֆլիզում 70-ական թվականներին» կտավում, որտեղ մենք տեսնում ենք Սունդուկյանի նկարագրած սալոններին ու էֆեմիաներին և մյուս կողմից նրանց քմահաճույքներին ենթակա և ներքնապես նրանց ատող ու արհամարհող ծառաներին:

Շամշինյանը, լինելով հետևողական դեմոկրատ նկարիչ, ոչ միայն զգաց Կովկասում գնալով ծավալվող բանվորական ռևոլյուցիոն շարժումը, այլև հանդես բերեց իր որոշակի դրական վերաբերմունքը դեպի ռևոլյուցիան: Բոլորովին պատահական չէ, որ նա նկարել է վրացի բանվոր-բանաստեղծ Իոսիֆ Դավիթաշվիլու դիմանկարը: Նրա ստեղծագործական և քաղաքական հայացքների էվոլյուցիայի արդյունքն են այն ճեպանկարները, որ նա կատարել է 1905 թ. ռևոլյուցիայի ժամանակ: Դժբախտաբար Շամշինյանի շատ աշխատանքներ մեզ համար մնում են անհայտ:

Սովետահայ արվեստաբանության առաջնահերթ խնդիրներից մեկն է՝ հայտնաբերել և ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել Շամշինյանի ուսանելի ստեղծագործական ժառանգությունը:

Շամշինյանի ստեղծագործության մեջ որոշ տեղ է գրավում նաև պեյզաժը և պորտրետը: Ինչպես պեյզաժում, այնպես և պորտրետում, Շամշինյանը հանդես է գալիս որպես հայկական ռեալիստական արվեստի լավագույն տրադիցիաների շարունակողը:

Շամշինյանը իր ստեղծագործություններում հարազատորեն պատկերել է Կովկասի տարբեր ժողովուրդների կյանքն ու կենցաղը: Նրա ստեղծագործության մեջ լավագույն դրսևորումն են գտել ժողովուրդների եղբայրության և ինտերնացիոնալիզմի գաղափարները:

*Ռ. ՊԱՐՍԱՄՅԱՆ*

Հայաստանի Պետական Պատկերասրահը, նկարչի ծննդյան 40-ամյակի կապակցությամբ կազմակերպելով ներկա ցուցահանդեսը, որտեղ կենտրոնացված են Պատկերասրահին մինչ այժմ հայտնի Շամշինյանի աշխատանքները, իր առջև խնդիր է դրել հնարավորին չափ լայն կերպով հասարակայնությանը ծանոթացնել նկարչի ստեղծագործությունների հետ, միաժամանակ օգնել հայ արվեստի պատմությամբ զբաղվող ընկերներին ամբողջական կերպով ուսումնասիրելու նկարչի ստեղծագործական ժառանգությունը։

Պատկերասրահի դիրեկցիան իր շնորհակալությունն է հայտնում Թբիլիսիի Արվեստների, Թատերական և Քաղաքային թանգարանների դիրեկցիաներին, Երևանի Պատմական թանգարանի դիրեկցիային, ինչպես նաև այն քաղաքացիներին, որոնք հոժարությամբ իրենց հավաքածուներում գտնվող Շամշինյանի աշխատանքները տրամադրեցին ներկա ցուցահանդեսը կազմակերպելու համար։

## ՀԱՐՈՒԹՅՈՒՆ ԻՍԱՀԱԿԻ ՇԱՄՇԻՆՅԱՆԻ ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ
(Համառոտած)

Ես ծնվել եմ 1856 թ. փետրվարի 9-ին Թիֆլիզում։

1861 թվին հայրս պաշտոնով փոխադրվեց Թիֆլիզից Դաղըստանի շրջանը, Ղարադաղ ամրությունը Գունիբի մոտ, ուր ընտանիքի հետ միասին տարան և ինձ։ Այդ վայրենի, բայց և գեղանի բնության մեջ ես առաջին անգամ սկսեցի նկարել։ Հայրս տեսնելով իմ սերը դեպի նկարչությունը, խրախուսում էր ինձ, քանի որ ինքն էլ սիրում էր գեղարվեստը։

1867 թվի սկզբին հայրս բերեց ինձ Թիֆլիզ և տվեց Բեյեր-Ստասյուլևիչի պանսիոնը գիմնազիայի պատրաստվելու համար, իսկ ինքը վերադարձավ Դաղստան՝ Թեմիր-Խան-Շուրա և 68 թվին մեռավ։

Մենակ մնալով պանսիոնում, առանց ծնողների, ես եռանդով պարապում էի գիտություններով և չէի թողնում նկարչությունը։ 69 թվին Դաղստանից եկավ մայրս և քանի որ սգի պատճառով չէր դուրս գալիս տնից, ուստի ես մենակ գնացի 1-ին գիմնազիայի տեսուչ Ժելիխովսկու մոտ, տարա հորս ծառայաթուղթը, իմ դոկումենտները և արտասուքն աչքիս խնդրեցի ընդունել ինձ գիմնազիա։ Այսպիսով ես ընդունվեցի գիմնազիա և տեղավորվելով մորս հետ մի սենյակում, խիստ կարիքի մեջ, սովորեցի գիմնազիայում։

1874 թվին, ես սկսեցի երեկոները գնալ նկարչական այն դպրոցը, որ այդ ժամանակ բացել էր Կովկասում Արվեստը խրախուսող ընկերությունը, որտեղ ես առաջադիմություն ցույց տվի և 76 թվին պարգև ստացա իմ նկարչական գործերի համար, իսկ 77 թվի փետրվարին թողի գիմնազիան վեցերորդ դասարանի վկայականով և գնացի Ս. Պետերբուրգ՝ Արվեստների Կայսերական Ճե-

մարանը, ու ընդունվեցի քննությամբ տալով նկարչությունից և գիմնազիական դասընթացի մի քանի առարկաներից։ Նույն 77 թվին փոխադրվեցի ֆիգուրային դասարանը առաջին համարով, իսկ 78 թվի հոկտեմբերին փոխվեցի նատուրային դասարանը վեցերորդ համարով և գիտությունների երկրորդ կուրսը։

1879 թվին փոխվեցի գիտությունների երրորդ կուրսը և նույն տարին էլ ստացա վկայական գիտությունների կուրսը վերջացնելու մասին Ճեմարանում լսած դասախոսությունների վերաբերյալ։ 80 թվին ստացա երկու փոքր արծաթե մեդալ՝ բնությունից վերցրած նկարի և էտյուդի համար, իսկ 82 թվի մայիսին՝ մի օրում ստացա երկու մեծ արծաթե մեդալ։

Ճեմարանական ժամանակս դասարանական աշխատանքներից բացի, փորագրում էի պղնձի վրա օֆորտներ՝ ավելի քան տասներկու տախտակներ, որոնց մեջ կային նկարչության պրոֆեսորներ Պ. Պ. Չիստյակովի, Ֆ. Բրունիի, Վ. Յակովի, Նեկրասովի և ուրիշների, նույնպես և Կովկասի մի քանի տիպերի և տեսարանների նկարներ։ Այդ ժամանակ էլ ես կազմում էի նկարներ անատոմիայի այն դասախոսությունների համար, որ կարդում էր պրոֆեսոր Լանդցերտը, և որը հրատարակեցին ճեմարանականները։ 83 թվին Ս. Պետերբուրգում ես պատվեր ստացա Ն. Գ. Պրինցից նկարելու ընտանեկան պատկերներ. ես, իհարկե, չէի հիշատակի այդ պատվերի մասին, եթե դա նշանակություն չունենար իմ հետագա կյանքում։ Երբ ես վերջացրի նկարները և պետք է ստանայի փողերը, նա փողը իմ ձեռքը չտվեց, այլ առաջարկեց գնալ Պարիզ փող ստանալու համար, գնացի Պարիզ, մեկ և կես ամիս աշխատեցի այնտեղ, նայեցի բոլոր պատկերասրահները, մեկ և կես ամիս ապրեցի Մյունխենում և երկու շաբաթ Վիեննայում։ Վերադառնալով Պետերբուրգ ճանապարհորդությունից հետո, ես ուզում էի գնալ ոսկյա մեդալի մրցության, որին ես իրավունք ունեի, սակայն չեղավ. եկա Թիֆլիզ տեսնվելու մորս հետ, սակայն գտնելով նրան հիվանդ, վճռեցի մի տարի մնալ, իսկ հետո էլ չկարողացա դուրս գալ այստեղից։

Տեսնելով իմ հիվանդ մորս ծանր դրությունը, ես սկսեցի նկարել պատկերներ և տալ նկարչության դասեր, իսկ 85 թվին Կոնստանդին Եգորովիչ Մակովսկու օժանդակությամբ, որը ժամանակավորապես եկել էր Թիֆլիզ, ծախեցի «Լիճը սարերում» պատկերը Գոնչարովային։ Անդամ եղա Արվեստները խրախուսող ընկե-



րության. ընտրվեցի կոմիտեի անդամ, ուր աշխատեցի մինչև 1902 թիվը։ Նույն տարին հրավեր ստացա նկարչության դասեր տալու Ներսիսյան Հոգևոր սեմինարիայում, կարճ ժամանակ Սուրբ Նշանի և Գայիանյան դպրոցներում, իսկ 86 թվին հրավիրվեցի այժմյան 3-րդ արական գիմնազիան։ Այդ երկու ուսումնարաններում՝ Ներս. դպրոցում և 3-րդ գիմնազիայում նկարչություն դասավանդում եմ մինչև այժմ էլ։

Այս 27 տարում սեմինարիայի և գիմնազիայի իմ աշակերտներից շատերը դարձան նկարիչներ և ճարտարապետներ։ Իմ դասավանդած ուսումնարաններում աշակերտները սիրով էին պարապում նկարչությամբ, և երբ նրանց աշխատությունները ուղարկում էին Արվեստների Ճեմարանը կոնկուրսի, նրանցից շատերը գովասանության էին արժանանում իրենց այդ գործերի համար։

1904 թվին կազմեցի և լույս ընծայեցի «Элементарный курс черчения и перспектив, приспособленный для обучающихся рисованию в средней общеобразовательной школе» դասագիրքը, որը հավանություն գտավ Լուսավորության մինիստրության կից Գիտական Կոմիտեի կողմից։

85 թվից սկսած հաճախ մասնակցել եմ զանազան բարեգործական ընկերությունների — ռուսաց, հայոց, վրաց և այլն, կազմած երեկույթներին, գրել եմ կենդանի պատկերներ, նվիրել եմ նկարներ վիճակախաղի համար, զարդարել եմ դահլիճներ երեկույթների օրերը և ամեն միջոցներով ձրի օգնել եմ երեկույթների հաջողությանը։

Տասն և վեց տարի հոգաբարձու եմ Նորաշենի ս. Աստվածածին եկեղեցու Մարիամյան դպրոցի։ 1906 թվից նկարչության դասեր եմ տալիս և 5-րդ արական գիմնազիայում։ 1912 թվի հունվարին ուղարկվեցի 3-րդ և 5-րդ արական գիմնազիաների կողմից Պետերբուրգ նկարիչների համառուսական համագումարին, ուր զեկուցում արի կովկասյան շրջանի ուսումնական հաստատությունների նկարչության դրության մասին։ 1908 թվից քարտուղար և գանձապահ եմ Թիֆլիզի 5-րդ արական գիմնազիայի չքավոր աշակերտներին օգնող ընկերության։

Իմ Թիֆլիզ գալուց ի վեր ես նկարել եմ շատ ժանրային նկարներ տեղական կյանքից, որոնց մեջ եղել են և պատմական նշանակություն ունեցողներ, ինչպես «Ղեյնոբա», «Ղամիսթևա», «Շեյ-

*թան-բազար», «Թուրքերի մեյդանը», «Պոստային կայարանը Կովկասում», «Ձյունահյուսը Ռազմա-Վիրական ճանապարհին», «Աուլ-Տրոխ», «Աուլ-Ցոխրի», «Աուլ-Գոլոտոս», «Դերվիշ ուղորդները Բաթումում», «Nocturne», «Կոնդակի ընթերցումը», զանազան մարդկանց նկարներ և շատ ուրիշ պատկերներ, ջրանկարներ, Կովկասի տեսարաններ և տիպեր։*

*1913 թ. Թիֆլիս*

# ԳԵՂԱՆԿԱՐ

**ՔՈԲԵՆԻ ՎԱՆՔԻ ՊԱՏԵՐԸ** (Վրացական ՍՍՌ)։ Էտյուդ։ 1884 թ.

*Կտ. յուղ. 32,5×21*

*Աջից մակագր.* «Внутренность монастыря Кобенъ, 1884 29 іюля».

**ՄՑԽԻԹԻ ԴՌԱՆԸ**։ 1884 թ.

*Կտ. յուղ. 25×14*

*Ցածում ձախից՝ «1884»*

*Աջից ստորագր. «Հ. Շամշինեան»։*

**ՎԻՐԱՎՈՐ ԶԻՆՎՈՐ**։ 1884 թ.

*Կտ. յուղ. 12,5×17,5*

*Ցածում ձախից ստորագր.* «А. Шамшиновъ».

*Աջից՝ «1884»*

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու)։

**ՔՅՈՌ ՕՂԼՈՒ ԲԵՐԴԸ** (Տեստրան Կոչորից)։ 1886 թ.

*Կտ. յուղ. 36×71*

*Ցածում ձախից՝ «1886»։*

*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Բժ. Գ. Մ. Գիգոլովի հավաքածու)։

**ՍԱՄՈՒՐ ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔԸ. ԴԱՂՍՏԱՆ**։ 1886 թ.

*Կտ. յուղ. 36×47*

*Ցածում ձախից՝ «1886»։*

*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

**ՌՈՒԿՐԱԻՆՈՒՀԻ**. 1887 թ.

*Կտ. յուղ. 24,5×15*

*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ 1887».

ՓՈՂՈՑ ՄԵՅԴԱՆՈՒՄ։ ՀԻՆ ԹԻՖԼԻԶ։ 1887 թ.

*Կտ. յուղ. 89,5×48,5*
*Ցածում աջից ստորագր.* «А. Шамшиновъ 1887».

ԳՅՈՒՂԱՑԻ (էտյուդ)։ 1887 թ.

*Կտ. յուղ. 20×13*
*Ցածում ձախից ստորագր.* «А. Шамшиновъ».
*Աջից՝ «1887»*

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու)։

ՇԵՅԹԱՆ ԲԱԶԱՐԸ։ ՀԻՆ ԹԻՖԼԻԶ։ 1890 թ.

*Կտ. յուղ. 49×72*
*Ցածում ձախից՝ «1890»*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Թբիլիսի քաղաքի Պատմա-ազգագրական թանգարանի հավաքածու)։

ՌԻՈՆ ԳԵՏԻ ՀՈՎԻՏԸ (էտյուդ)։ 1893 թ.

*Կտ. յուղ. 23×33,5*
*Ձախից՝* «... 1893 23 іюля».
*Աջից՝* «А. Шамшиновъ».

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու)։

ԹԻՖԼԻԶԻ ՋՐԿԻՐ։ 1893 թ.

*Կտ. յուղ. 26×18*
*Ցածում ձախից՝ «1893»*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Թբիլիսի քաղաքի Պատմա-ազգագրական թանգարանի հավաքածու)։

ԴԵՅՆՈԲԱ։ 1893 թ.

*Կտ. յուղ. 90×125*
*Ձախից ցածում՝ «1893»*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու)։



Ե. Ի. ՊՈՒՂԻՆՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ։ 1895 թ.

*Կտ. յուղ. (ձվաձիր) 71×58*
*Ցածում ստորագր.* «А. Шамшиновъ 95».

ԾԵՐՈՒՆԻ (էտյուդ)։ 1896 թ.

*Կտ. յուղ. 25×17,5*
*Ցածում ձախից՝ «1896»*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու)։

ԼՎԱՑՔ ԵՆ ԱՆՈՒՄ ԳԵՏԱԿՈՒՄ։ 1898 թ.

*Կտ. յուղ. 14,5×22*
*Ցածում ձախից՝ «1898»*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու)։

ՍԱՆԱՀԻՆԻ ԿԱՄՈՒՐՋԸ։ 1899 թ.

*Կտ. յուղ. 41×75*
*Ցածում աջից ստորագր.* «А. Шамшиновъ 1899».

ԼԵՌՆՑԻՆԵՐԻ ԴԱԴԱՐՔԸ։ ԴԱՂՍՏԱՆ։ 1902 թ.

*Կտ. յուղ. 54×80*
*Ցածում աջից ստորագր.* «А. Шамшиновъ 1902».

ՎԵՐԱԴԱՌՆՈՒՄ ԵՆ ՏՈՒՆ (70 թվ. Թիֆլիզ)։ 1913 թ.

*Կտ. յուղ. 46×37*
*Աջից ցածում ստորագր.* «А. Шамшиновъ 1913».

(Հայաստանի Պատմական թանգարանի հավաքածու)։

ԵԶԱՆ ԿՄԱԽՔ։

*Կտ. յուղ. 13×16*

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու)։

35834-65
ZUUՌ-Ap

ԵՐԵԿՈ (էտյուդ)։

*Կտ. յուղ. 23×33,5*

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու)։

ՆԿԱՐՉԻ ՄՈՐ ԴԻՄԱՆԿԱՐԸ։

*Կտ. յուղ. 37×32*

ԽՈՀԱՆՈՑ (էտյուդ)։

*Կտ. յուղ. 28,5×21*

ՓՈՂՈՑ ՀԻՆ ԹԻՖԼԻԶՈՒՄ (էտյուդ)։

*Կտ. յուղ. 32×20,5*

*Ձախից ցածում ստորագր.* «А. Шамшиновъ».

ՈՒԶՈ (պեյզաժ)։

*Կտ. յուղ. 22,5×32,5*

*Աջից ցածում ստորագր.* «А. Шамшиновъ».

ՍԱՅԼԸ ՋԻՈՎ (էտյուդ)։

*Կտ. յուղ. 18,5×27,5*

*Աջից ցածում ստորագր.* «А. Ш.».

# ԳԾԱՆԿԱՐ, ՋՐԱՆԵՐԿ, ՕՖՈՐՏ

ԲՆՈՐԴԸ ՊԱՐԵԳՈՏՈՎ։ (Ակադեմիկ նկար)։ 1879 թ.

*Թ. մատ. 40×28*

*Աջից ցածում ստորագր.* «А. Шамшиновъ 1879».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու)։

ԲՆՈՐԴԸ ՊԱՐԵԳՈՏՈՎ։ (Ակադեմիկ նկար)։ 1879 թ.

*Թ. մատ. 45×31*

*Աջից ցածում ստորագր.* «А. Шамшиновъ 1879».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու)։

Ն. Ա. ՆԵԿՐԱՍՈՎԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ։ 1880 թ.

*Օֆորտ 11×7,5*

*Ցածում մակագր.* «Гравировалъ А. Шамшиновъ, Первый офортъ 1880 году Петербургъ».

ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՅԱՆԻ ԲԱԿՈՒՄ։ 1882 թ.

*Օֆորտ 12×16*

Խ. ԱԲՈՎՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ։ 1882 թ.

*Օֆորտ 16,5×12*

*Ցածում մակագր.* «Гравировалъ въ С-Петербургѣ въ 1882 году А. Шамшиновъ».

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու)։

ՆԿԱՐԻՉ Պ. ՉԻՍՏՅԱԿՈՎԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ։ 1882 թ.

*Օֆորտ 42×33,5*

*Աջից ցածում ստորագր.* «А. Шамшиновъ».

*Ձախից՝ «1882»*

ՊԱՐՍԻԿ ՄԱՇԱԿԱՐ: 1882 թ.

*Օֆորտ 16×12*
*Ցածում ձախից՝ «1882»*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

ՆԿԱՐՉԻ ՄՅՈՒՆԽԵՆԻ ԱՐՎԵՍՏԱՆՈՑԻ ՄԻ ԱՆԿՅՈՒՆ: 1883 թ.

*Թ. տուշ, գրիչ 28×18*
*Ցածում մակագր.* «Уголъ моей мастерской въ Мюнхенѣ. 1883 г.».

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու):

Հ. ՇԱՄՇԻՆՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ: 1883 թ.

(Նկարիչ Ս. Հոլլոշիի աշխատանքից):

*Թ. գրիչ, տուշ 23×14,5*
*Ցածում մակագր.* «Съ этюда Hollochy, который писалъ мой портретъ въ Мюнхенѣ. Подражаніе офорту. Рисунокъ исполненъ въ Мюнхенѣ въ 1883 г. А. Шамшиновъ».
*Ցածում աջից ստորագր.* «A. Chamchinoff 1883».

ԴԵՂԱՏԱՆ ՎԱՃԱՌԱՍԵՂԱՆԻ ԱՌԱՋ: 1883 թ.

*Թ. տուշ, վրձին՝ 17×10*
*Ցածում ձախից մակագր.* «Октября 17-го 83 г.».
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Ս. Մ. Թարյանի հավաքածու):

ՊԱՐՍԻԿ: 1885 թ.

*Թ. տուշ, գրիչ, վրձին 41×28*
*Ցածում աջից ստորագր.* «А. Шамшиновъ».
*Ձախից մակագր.* «1885 14 ноября».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու):

ՆԿԱՐԻՉ Վ. Ի. ՅԱԿՈԲԻԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ: 1886 թ.

*Օֆորտ 31×21,5*
*Ցածում աջից մակագր.* «Талантливому Адамяну отъ А. Шамшинова 1886 г.».



ՍՈԼՈԼԱԿԻ ԿԱՄՈՒՐՋԸ: ՀԻՆ ԹԻՖԼԻՍ: 1888 թ.

*Թ. մատ. 16×10,5*
*Ձախից՝ «1888»:*
*Աջից՝* «Tiflis».
*Ցածում մակագր.* «Сололакій мостъ А. Ш.»

(Թբիլիսի քաղաքի Պատմա-ազգագրական թանգարանի հավաքածու):

ԹԻՖԼԻՍ: ԲԵԹՂԱՅԵՄԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԶԱՆԳԱԿԱՏՈՒՆԸ: 1890 թ.

*Սով. մատ. 29×18*
*Ցածում աջից մակագր.* «Колокольня Вифліемской церкви въ Тифлисѣ. 24 іюня 1890 г. А. Шамшиновъ».

(Թբիլիսի քաղաքի Պատմա-ազգագրական թանգարանի հավաքածու):

ՄԻ ԱՆԿՅՈՒՆ ԹԻՖԼԻՍՈՒՄ: 1890 թ.

*Թ. մատ. 28×20,5*
*Ցածում ձախից ստորագր.* «А. Шамшиновъ 15-го іюля 1890, Тифлисъ».

ԻՆՔՆԱԴԻՄԱՆԿԱՐ: 1890 թ.

*Թ. ջրան. 34,5×25,5*
*Ցածում աջից ստորագր.* «1890 А. Шамшиновъ».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու):

ԴԵՐԱՍԱՆՈՒՀԻ Մ. Գ. ՍԱՎԻՆԱՆ (ճեպանկար): 1890 թ.

*Թ. մատ. 13,5×9*
*Ցածում մակագր.* «А. Шамшинянъ. Набросокъ съ М. Г. Савиной у Ис. Е. Питоева въ Коджорахѣ 26-го мая 1890 г.».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու):

ԿՈՄՊՈԶԻՏՈՐ Ա. ՌՈՒԲԻՆՇՏԵՅՆԸ (ճեպանկար): 1891 թ.

*Թ. մատ. 11,5×8*
*Ցածում մակագր.* «Ант. Гр. Рубинштейнъ въ саду дворцового собранія въ Тифлисѣ. 1891 г. Лѣтом».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու):

ԳՅՈՒՂԱՑԻ: 1891 թ.

*Սով. մատ. 31×21*

*Ցածում աջից ստորագր.* «А. Шамшиновъ 18 $\frac{X}{5}$ 91».

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու):

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍՈՒՄ: (Ճեպանկար): 1893 թ.

*Թ. մատ. 30×22*

*Աջից մակագր.* «Выставка 1893 г. въ пом. воен. ист. музея».
*Ցածում ստորագր.* «А. Шамшиновъ».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու):

ԲՈՏԼԻԽ ԱՈՒԼԸ. ԴԱՂՍՏԱՆ: 1895 թ.

*Թ. ջրան. 14,5×11*

*Ցածում ձախից մակագր.* «Ботлихъ 1895».

ԿՈՋՈՐ: Պեյզաժ:

*Թ. ջրան. 8,5×13*

*Աջից մակագր.* «Коджоры 1898 г.»

ՊՈՒՇԿԻՆՅԱՆ ԵՐԵԿՈՒՅԹԻ «ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ»-ի էսքիզ: 1899 թ.

*Թ. գրիչ, թանաք. 26,5×35*

Ա. Ս. ՊՈՒՇԿԻՆԻ ԾՆՆԴՅԱՆ 100-ԱՄՅԱԿԻՆ ՆՎԻՐՎԱԾ ԳՐԱԿԱՆ ԵՐԵԿՈՒՅԹԻ ԾՐԱԳՐԻ ՇԱՊԻԿԻ ՆԿԱՐԸ: 1899 թ.

*Թ. մատ. 32×22,5*

*Շապիկի վրա մակագր.* «Чествованіе памяти А. С. Пушкина Тифлисскимъ артистическимъ обществомъ 1899».
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

ԵՐԿԱԹԳԾԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ: 1900 թ.

*Թ. մատ. 8×13*

*Ցածում աջից ստորագր.* «А. Шамшиновъ. 14-го ноября 1900».



«ԿԵՆԴԱՆԻ ՊԱՏԿԵՐ»-ի էսքիզ: 1901 թ.

*Թ. մատ. 20×23,5*

*Վերևում մակագր.* «Эскизъ къ живой картинѣ 1901 г.».

(Վրացական ՍՍՌ Թատերական թանգարանի հավաքածու):

ԳՈԼՈՎԻՆՍԿԱՅԱ ՊՈՂՈՏԱՅՈՒՄ: ԹԻՖԼԻԶ: (Ճեպանկար): 1902 թ.

*Թ. տուշ, գրիչ, 23,5×22*

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու):

ԾՈՎԻ ՏԵՍԱՐԱՆ: 1908 թ.

*Թ. ջրան. 14,5×23,5*
*Ձախից՝ «1908»։*
*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու):

ԻՇԽ. Ա. Դ. ՄԵՆՇԻԿՈՎԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ:

*Օֆորտ 16×12*
*Աջից ցածում ստորագր.* «Гр. А. Шамшиновъ».

ՀԻՆ ԹԻՖԼԻԶԻ ՏԻՊԵՐ:

*Թ. մատ. 8×5,5*
*Ցածում մակագր.* «На конкѣ въ Тифлисѣ А. Ш.».

(Թբիլիսի քաղաքի Պատմա-ազգագրական թանգարանի հավաքածու)։

ՌՈՍԻՆ (?) ՀԱՄԼԵՏԻ ԴԵՐՈՒՄ:

*Փայտագրություն 11×5*
*Ձախից՝ «Տատի»։*
*Աջից՝ «Ա. Շամշին»։*

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու):

«ԿՈՆԴԱԿԻ ԸՆԹԵՐՑՈՒՄԸ ԳՅՈՒՂՈՒՄ» նկարի էսքիզը:

*Թ. ջրան. 29×43,5*
*Աջից ցածում մակագր.* «1-ый эскизъ для картины «Кондакъ».

ՊԵՅԶԱԺ:

*Թ. ջրան. 8,5×25,5*

*Աջից մակագր.* «Часть имѣнія А. Казарова въ Табахмелахъ. 9-го августа 1908 г.».

ԾԵՐՈՒՆՈՒ ԴԻՄԱՆԿԱՐ:

*Թ. ջրան. 22×16,5*

(Վրացական ՍՍՌ Արվեստների թանգարանի հավաքածու):

ԳԵՐՃ ԳՈՒՇՅԱՆ: Ճեպանկար:

*Թ. տուշ, գրիչ, 22×18*

(Մ. Հ. Շամշինյանի հավաքածու):

ԼՈՌՎԱ ՊԵՅԶԱԺ:

*Թ. ջրան. 8,5×13*

*Վերևից մակագր.* «Противъ ст. Санаинъ. Горы».

ՊԵՅԶԱԺ:

*Թ. ջրան. 6×11,5*

ԺԱՄԱՊԱՀԸ:

*Օֆորտ 20×12,5*

ԻՄԵՐԵԼ:

*Փայտագրություն 25×18*

*Աջից ցածում ստորագր. «Ա. Շամշին»։*

ՎԵՐՋԱԼՈՒՅՍ: (Պեյզաժ):

*Թ. ջրան. 8,5×15*

*Աջից ստորագր.* «А. Шамшиновъ».

ՀՈԼԼՈՇԻ Շ.

Հ. ՇԱՄՇԻՆՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ: 1884 թ.

*Կտ. յուղ. 29×21,5*

*Աջից ցածում մակագր. «Հոլլոշիից 84 Շամշինեանին Մինխէն»։*

ՎՐՈՒԲԵԼ Մ. Ա.

Հ. ՇԱՄՇԻՆՅԱՆԻ ԴԻՄԱՆԿԱՐԸ: 1883 թ.

*Թ. տուշ, գրիչ, 29×23,5*

*Աջից ցածում ստորագր.* «М. Врубель 14-ое М. 83».

## ԿԱՏԱԼՈԳՈՒՄ ԸՆԴՈՒՆՎԱԾ ԿՐՃԱՏՈՒՄՆԵՐ

| | | |
|---|---|---|
| Կտ. | — | կտավ |
| Յուղ. | — | յուղաներկ |
| Ստվ. | — | ստվարաթուղթ |
| Թ. | — | թուղթ |
| Մատ. | — | մատիտ |
| Ջրան. | — | ջրաներկ |
| Ստորագր. | — | ստորագրություն |
| Մակագր. | — | մակագրություն |

Сорок лет тому назад, 4-го февраля 1914 года, в тяжелом материальном положении в возрасте 58-ми лет скончался, состарившийся раньше времени, один из видных представителей армянского изобразительного искусства конца 19-го и начала 20-го века—Арутюн Шамшинян.

Творческое наследие Шамшиняна не велико—всего несколько десятков законченных картин, около ста этюдов, рисунков, эскизов неосуществленных композиций.

Будучи обременен педагогической работой, Шамшинян не мог продолжительно и систематически заниматься искусством. О его блестящих творческих замыслах мы можем составить понятие только лишь через сделанные им наскоро эскизы. О широком кругозоре художника-гражданина, о его передовых демократических взглядах красочно говорят нам этюды и зарисовки, исполненные им с большим вдохновением.

Еще с раннего детства спутниками художника были нужда и необеспеченное материальное положение. Работать он начал очень рано и всю свою жизнь любил труд и тружеников. Учась в Петербурге, в Академии Художеств, в наиболее блестящий период деятельности Товарищества Передвижных выставок, он близко знакомится с их искусством. Обучаясь в Академии под руководством художника-педагога П. П. Чистякова, он глубоко изучает основы реалистического искусства. Блестяще окончив в 1883 г. полный курс Академии, Шамшинян, будучи лишен возможности принять участие в конкурсе на золотую медаль, переезжает на постоянное жительство на свою родину в Тифлис, где и проживает и работает до конца своей жизни.

Одной из дошедших до нас его работ раннего периода

является эскиз «У прилавка аптеки» (1883 г.), в котором с большим художественным обобщением изображены одиночество и безутешное горе. По своему идейному содержанию эта картина очень близка к произведениям выдающихся русских жанристов Федотова и Перова. Как они, так и их последователь Шамшинян не занимается констатированием фактов, а выявляет свой определенный творческий подход к ним. Изображая в основном жизнь и быт труженика-ремесленника, он ярко проявляет свою любовь к ним. Он страдает вместе со своими героями и одновременно безгранично радуется вместе с ними на самобытных народных празднествах. В своих работах он изображает с любовью, но одновременно и с глубокой внутренней скорбью, бедняков, чувячников, водоносов, крестьян, рыбаков и слуг. Изображая их горькую судьбу, художник верит в их силу.

Большое место в творчестве Шамшиняна занимают народные празднества. Всестороннее изучение этих работ показывает, что художник не только правдиво изображает внешнюю сторону этих празднеств, но и проявляет в них определенный критический подход. Достойна особого внимания его картина «Кейноба»—написанная в 1893 году. Фактически вся картина построена на контрастах, придающих ей внутреннюю динамичность и создающих для художника возможность вместе со своими героями—участниками карновала, посмеяться над богатым и самодовольным купцом, давая правдивое изображение двух Тифлисов—трудового и эксплуатирующего.

В творчестве Шамшиняна довольно значительное место занимает противопоставление двух Тифлисов и ярко чувствуется высмеивание имущих и сочувствие к труженикам.

Это мы можем увидеть в исполненных художником в 1890-м и 1887 гг. двух картинах—«Шайтан базар» (образы священника, муллы, чиновников) и «Старый Тифлис» (изнуренные лица ремесленников и самодовольное тупоумие купца и восседавшего на верблюде богача). То же надо сказать и о последней крупной работе художника—«Возвращение домой. 70-ые годы. Тифлис», исполненной в 1913 году, где мы видим описанных Сундукяном саломей и эфемий и с другой стороны слуг, подвергнутых их прихотям и внутренне презирающих и ненавидящих их.



Будучи последовательным демократом-художником, Шамшинян не только почувствовал расширяемое изо дня в день рабочее революционное движение на Кавказе, но и проявил свое определенное положительное отношение к революции. Нельзя считать случайностью, что им написан портрет грузинского рабочего-поэта Иосифа Давидашвили. Результатом эволюции его творческих и политических взглядов являются зарисовки, сделанные им в дни революции 1905 г. К сожалению многие работы Шамшиняна остаются неизвестными нам.

Одной из первоочередных задач наших искусствоведов является выявление и детальное изучение поучительного творческого наследия Шамшиняна.

Известное место в творчестве Шамшиняна занимают также пейзаж и портрет. Как в пейзаже, так и в портрете Шамшинян является лучшим продолжателем традиций армянского реалистического искусства.

В своих произведениях Шамшинян правдиво отобразил жизнь и быт народов Кавказа. В его произведениях нашли наилучшее проявление идеи братства народов и интернационализма.

Р. ПАРСАМЯН

Организовывая настоящую выставку, посвященную сорокалетию со дня смерти художника и сосредоточив все известные по сей день Галерее работы Шамшиняна, Государственная Картинная галерея Армении поставила перед собой задачу по возможности шире ознакомить общественность с произведениями художника, одновременно с этим помочь товарищам, занимающимся историей армянского искусства, всесторонне изучить творческое наследие художника.

Дирекция Картинной галереи выражает свою благодарность дирекциям Тбилисского музея искусств, Тбилисского Театрального музея, Историко-этнографического музея г. Тбилиси, Ереванского Исторического музея, а также гражданам, предоставившим Галерее имеющиеся в их собраниях работы Шамшиняна, для их экспонирования на данной выставке.

## АВТОБИОГРАФИЯ АРУТЮНА ИСААКОВИЧА ШАМШИНЯНА
(Сокращенная)

Я родился в г. Тифлисе 9-го февраля 1856 г.

В 1861 г. отец переехал на работу в Дагестан и поселился в Карадагском округе, недалеко от Гуниба. Здесь, на лоне этой дикой, но прекрасной природы я впервые начал рисовать. Заметив во мне любовь к рисованию, отец всячески поощрял меня, поскольку он и сам был любителем искусства.

В начале 1867 г. отец привез меня в Тифлис и поместил в пансионе Бейер-Стасюлевича, чтоб подготовить к гимназии, сам же вернулся в Дагестан—в Темир-Хан-Шуру, где и умер в 68-ом году.

Оставшись без родителей, я усиленно занимался науками, не забывая также о рисовании. В 69-м году из Дагестана приехала моя мать и так как из-за траура она не выходила из дому, я вынужден был один пойти к директору I гимназии Желиховскому и предъявив послужной список отца и свои документы, со слезами на глазах стал просить принять меня в гимназию. Таким образом я был принят в гимназию и поселившись с матерью в одной комнатке, в большой нужде, начал учиться в гимназии.

С 1874 г. я начал посещать по вечерам школу живописи, которая к тому времени была открыта в Тифлисе Обществом поощрения художеств. Здесь я выявил свои способности и был награжден за свои живописные работы, а в феврале 77-го года, покинув гимназию со свидетельством шестого класса, я уехал в С-Петербург и был принят в Императорскую

Академию художеств, предварительно сдав экзамены по рисованию и по некоторым предметам гимназического курса. В том же 77 году я был переведен в фигурный класс первым номером, и в октябре 78-го года перешел в натурный класс шестым номером, а по общеобразовательным предметам на второй курс.

В 1879 году я перешел на третий курс по общеобразовательным предметам и в том же году получил аттестат об окончании курса лекций, прослушанных мною в Академии. В 80-м году я получил две серебряные медали за пейзаж и этюд, а в мае 82-го года я в один день получил две большие серебряные медали.

В академические годы, помимо классных работ, я изготовил на меди двенадцать офортов, среди которых были портреты профессора живописи Чистякова, Ф. Бруни, В. Якова, Некрасова и других, а также некоторые виды и типы Кавказа. В то же время я делал рисунки для лекций профессора Ландцерта по анатомии, каковые и были изданы в Академии. В 83-м году я получил в Петербурге заказ от Н. Г. Принтца на семейные портреты. Об этом заказе я не упоминал бы, конечно, если бы это не сыграло некоторой роли в моей жизни. По окончании картин, он не выдал мне на руки причитающейся мне суммы, а предложил выехать в Париж и там получить эти деньги. Воспользовавшись его предложением, я уехал в Париж, где поработал полтора месяца, просмотрел все музеи, затем полтора месяца прожил в Мюнхене и две недели в Вене. Вернувшись в Петербург после своего путешествия, я имел намерение принять участие в конкурсе на золотую медаль (на что я имел право). Однако этого мне не удалось сделать, так как заехав в Тифлис повидать свою мать я застал ее больной и решил еще год побыть с ней, но после этого мне больше не удалось выехать из Тифлиса.

Тяжелое состояние матери заставило меня писать картины и преподавать рисование в школах, а в 85-м году при содействии приехавшего временно в Тифлис Константина



Егоровича Маковского я продал Гончаровой свою картину «Озеро в горах». Затем я поступил в члены Общества поощрения искусств, был избран членом комитета и его секретарем, поработав здесь до 1902 г. В том же году я получил уроки в Духовной семинарии Нерсисян, некоторое время преподавал также в школах Сурп Ншан и Гаянян, а в 86-м году был приглашен в 3-ью мужскую гимназию. В этих двух училищах—в Нерсисян семинарии и в 3-ей гимназии и по сей день я преподаю рисование.

На протяжении прошедших 27-ми лет многие из моих учеников по семинарии и гимназии стали художниками и архитекторами. В этих училищах ученики с особой любовью занимались рисованием, и когда их работы посылали в Академию художеств, многие из них удостаивались похвал.

В 1904 году я составил и издал «Элементарный курс черчения и перспектив, приспособленный для обучающихся рисованию в средней общеобразовательной школе», одобренный Научным Комитетом Министерства просвещения.

Начиная с 85-го года я принимал участие на вечерах, организовываемых различными (русскими, армянскими, грузинскими) благотворительными обществами, писал для них живые картины, жертвовал картины для аукционов, разукрашивал залы в дни вечеров и всячески безвозмездно помогал успеху этих вечеров.

В течение 16-ти лет я состоял попечителем в школе Мариамян Норашенской церкви.

С 1906 г. преподаю рисование также в 5-ой мужской гимназии.

В 1912 г. 3-ья и 5-ая мужские гимназии направили меня в Петербург на Всероссийский съезд художников, где я сделал доклад о состоянии дела преподавания рисования в учебных заведениях Кавказского округа. С 1908 г. я состою секретарем и кассиром общества помощи нуждающимся ученикам 3-ей мужской гимназии.

После переселения в Тифлис я писал много жанровых картин из местной жизни, среди которых были и такие, ко-

торые имели историческое значение, каковыми являются: «Кейноба», «Гамистева», «Шайтан базар», «Тюркский мейдан», «Почтовая станция на Кавказе», «Лавина на Военно-Грузинской дороге», «Аул-Тлох», «Аул-Цохри», «Аул-Голотос», «Дервиши в Батуме», «Nocturne», «Чтение кондака» и многие портреты и акварели видов и типов Кавказа.

1913 г. Тифлис.

# ЖИВОПИСЬ

СТЕНЫ КОБЕНСКОГО МОНАСТЫРЯ. **(Грузинская ССР)**

Этюд. 1884 г.
Х. м. 32,5×21.
Справа надпись: «Внутренность монастыря Кобенъ. 1884 29 іюля».

У ДВЕРЕЙ МЕЧЕТИ. 1884 г.

Х. м. 25×14.
Внизу слева: «1884». Справа подпись: «*Հ. Շամշինեան*».

РАНЕНЫЙ СОЛДАТ. 1884 г.

Х. м. 12,5×17,5.
Внизу слева подпись: «А. Шамшиновъ».
Справа «1884».

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**

КРЕПОСТЬ КЁР-ОГЛЫ. **(Вид из Колжор).** 1886 г.

Х. м. 36×71.
Внизу слева: «1886». Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание д-ра Г. М. Гиголова).**

ВЕРХОВЬЕ РЕКИ САМУР. ДАГЕСТАН. 1886 г.

Х. м. 36×47.
Внизу слева: «1886». Справа подпись: «А. Шамшиновъ».

УКРАИНКА. 1887 г.

Х. м. 24,5×15.
Справа подпись: «А. Шамшиновъ 1887».

УЛИЦА НА МАЙДАНЕ. СТАРЫЙ ТИФЛИС. 1887 г.

Х. м. 89,5×48,5.
Справа внизу подпись: «А. Шамшиновъ 1887».

КРЕСТЬЯНИН. Этюд. 1887 г.

Х. м. 20×13.
Внизу слева подпись: «А. Шамшиновъ». Справа: «1887».

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**

ШАЙТАН БАЗАР. СТАРЫЙ ТИФЛИС. 1890 г.

Х. м. 49×72.
Внизу слева: «1890». Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание Историко-этнографического музея города Тбилиси).**

ДОЛИНА РЕКИ РИОН. (Этюд). 1893 г.

Х. м. 23×33,5.
Слева: «.....1893 23 іюля». Справа: «А. Шамшиновъ».

**(Собрание М. А. Шамшинян).**

ТИФЛИССКИЙ ВОДОНОС. 1893 г.

Х. м. 26×18.
Слева внизу: «1893». Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание Историко-этнографического музея города Тбилиси).**

КЕЙНОБА. 1893 г.

Х. м. 90×125.
Внизу слева: «1893». Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

ПОРТРЕТ Е. И. ПУГИНЯНА. 1895 г.

Х. м. 71×58.
Внизу подпись: «А. Шамшиновъ 95».



СТАРИК. Этюд. 1896 г.

Х. м. 25×17,5.
Внизу слева: «1896». Справа. подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**

СТИРКА БЕЛЬЯ НА РЕЧКЕ. 1898 г.

Х. м. 14,5×22.
Внизу слева: «1898». Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**

САНАИНСКИЙ МОСТ. 1899 г.

Х. м. 41×75.
Внизу справа подпись: «А. Шамшиновъ 1899».

ПРИВАЛ ГОРЦЕВ. ДАГЕСТАН. 1902 г.

Х. м. 54×80.
Внизу справа подпись: «А. Шамшиновъ 1902».

ВОЗВРАЩЕНИЕ ДОМОЙ. **(70-ые годы. Тифлис).** 1913 г.

Х. м. 46×37.
Справа внизу подпись: «А. Шамшиновъ 1913».

**(Собрание Исторического музея Армении).**

СКЕЛЕТ БЫКА.

Х. м. 13×16.

**(Собрание М. А. Шамшинян).**

ВЕЧЕР. Этюд.

Х. м. 23×33,5.

**(Собрание М. А. Шамшинян).**

ПОРТРЕТ МАТЕРИ ХУДОЖНИКА.

Х. м. 37×32.

КУХНЯ. (Этюд).

Х. м. 28,5×21.

УЛИЦА В СТАРОМ ТИФЛИСЕ. (Этюд).

Х. м. 32×20,5.
Слева внизу подпись: «А. Шамшиновъ».

УДЗО. (Пейзаж).

Х. м. 22,5×32,5.
Справа внизу подпись: «А. Шамшиновъ».

ТЕЛЕГА С ЛОШАДЬЮ. (Этюд).

Х. м. 18,5×27,5.
Справа внизу подпись: «А. Ш.».

## РИСУНОК, АКВАРЕЛЬ, ОФОРТ

НАТУРЩИК В ТОГЕ. (Академич. рисунок). 1879 г.

Б. кар. 40×28.

Справа внизу подпись: «А. Шамшиновъ 1879».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

НАТУРЩИК В ТОГЕ. (Академич. рисунок). 1879 г.

Б. кар. 45×31.

Справа внизу подпись: «А. Шамшиновъ 1879».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

ПОРТРЕТ Н. А. НЕКРАСОВА. 1880 г.

Офорт 11×7,5.

Внизу надпись: «Гравировалъ А. Шамшиновъ. Первый офорт 1880 году Петербургѣ».

ВО ДВОРЕ ПОЧТОВОЙ СТАНЦИИ. 1882 г.

Офорт. 12×16.

ПОРТРЕТ Х. АБОВЯНА. 1882 г.

Офорт 16,5×12.

Внизу надпись: «Гравировалъ въ С-Петербургѣ въ 1882 году А. Шамшиновъ».

ПОРТРЕТ ХУДОЖНИКА П. П. ЧИСТЯКОВА. 1882 г.

Офорт 42×33,5.

Справа внизу подпись: «А. Шамшиновъ». Слева: «1882 г.».

ПЕРСИЯНИН-ЧУВЯЧНИК. 1882 г.

Офорт 16×12.

Слева внизу: «1882 г.». Справа подпись: «А. Шамшиновъ».

УГОЛОК МЮНХЕНСКОЙ МАСТЕРСКОЙ ХУДОЖНИКА. 1883 г.

Б. тушь, перо. 28×18.

Внизу надпись: «Уголъ моей мастерской въ Мюнхенѣ 1883 г.».

**(Собрание М. А. Шамшинян).**

ПОРТРЕТ А. ШАМШИНЯНА. 1883 г.

**(С работы художника С. Холлоши).**

Б. перо, тушь. 23×14,5.

Внизу надпись: «Съ этюда Hollochy, который писалъ мой портрет въ Мюнхенѣ. Подражаніе офорту. Рисунокъ исполненъ въ Мюнхенѣ въ 1883 г. А. Шамшиновъ». Внизу справа подпись: «A. Ghamchinoff 1883».

У ПРИЛАВКА АПТЕКИ. 1883 г.

Б. тушь, кисть 17×10.

Слева внизу надпись: «Октября 17-го 83 г.»

Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание С. М. Тарьяна).**

ПЕРСИЯНИН. 1885 г.

Б. тушь, перо, кисть 41×28.

Внизу справа подпись: «А. Шамшиновъ». Слева надпись: «1885 14 ноября».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

ПОРТРЕТ ХУДОЖНИКА В. И. ЯКОБИ. 1886 г.

Офорт 31×21,5.

Справа внизу надпись: «Талантливому Адамяну отъ А. Шамшинова. 1886 г.».

СОЛОЛАКСКИЙ МОСТ. СТАРЫЙ ТИФЛИС. 1888 г.

Б. кар. 16×10,5.

Слева: «1888». Справа: Внизу надпись: «Сололакій мостъ А. Ш.».

**(Собрание Историко-этнографического музея города Тбилиси).**

ТИФЛИС. КОЛОКОЛЬНЯ БЕТХАИМСКОЙ ЦЕРКВИ. 1890 г.

К. кар. 29×18.

Внизу справа надпись: «Колокольня Вифлiемской церкви въ Тифлисѣ 24-го іюня 1890 г. А. Шамшиновъ».

**(Собрание Историко-этнографического музея города Тбилиси).**



УГОЛОК ТИФЛИСА. 1890 г.

Б. кар. 28×20,5.

Слева внизу подпись: «А. Шамшиновъ 15 іюля 1890. Тифлисъ».

АВТОПОРТРЕТ. 1890 г.

Б. акв. 34,5×25,5.

Справа внизу подпись: «1890 «А. Шамшиновъ».

АРТИСТКА М. Г. САВИНА. (Набросок). 1890 г.

Б. кар. 13,5×9.

Внизу надпись: А. Шамшинянъ. Набросокъ съ М. Г. Савиной у Ис. Е. Питоева въ Коджорахъ 26-го мая 1890 г.

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

КОМПОЗИТОР А. РУБИНШТЕЙН. (Набросок). 1891 г.

Б. кар. 11,5×8.

Внизу надпись: «Ант. Гр. Рубинштейнъ въ саду дворцового собранія въ Тифлисѣ 1891 г. лѣтомъ».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

КРЕСТЬЯНИН. 1891 г.

К. кар. 31×21.

Внизу справа подпись: «А. Шамшиновъ 18 $\frac{X}{5}$ 91».

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**

НА ВЫСТАВКЕ. Наброски. 1893 г.

Б. кар. 30×22.

Справа надпись: «Выставка 1893 г. въ пом. воен. ист. музея». Внизу справа подпись. А. Шамшиновъ».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

АУЛ БОТЛИХ. ДАГЕСТАН. 1895 г.

Б. акв. 14,5×11.

Внизу слева надпись: «Ботлихъ 1895».

КОДЖОРЫ. ПЕЙЗАЖ. 1898 г.

Б. акв. 8,5×13.

Справа надпись: «Коджоры 1898 г.».

ЭСКИЗ «ЖИВОЙ КАРТИНЫ» ДЛЯ ПУШКИНСКОГО ВЕЧЕРА. 1899 г.

Б. перо, чернила. 26,5×35.

РИСУНОК ОБЛОЖКИ ПРОГРАММЫ ЛИТЕРАТУРНОГО ВЕЧЕРА, ПОСВЯЩЕННОГО 100-ЛЕТИЮ СО ДНЯ РОЖДЕНИЯ А. С. ПУШКИНА. 1899 г.

Б. кар. 32×22,5.

На обложке надпись: «Чествованiе памяти А. С. Пушкина Тифлисскимъ артистическимъ обществомъ 1899».

Справа подпись: «А. Шамшиновъ».

НА ЖЕЛЕЗНОДОРОЖНОЙ СТАНЦИИ. 1900 г.

Б. кар. 8×13.

Внизу справа подпись: «А. Шамшиновъ 14-го ноября 1900».

ЭСКИЗ «ЖИВОЙ КАРТИНЫ». 1901 г.

Б. кар. 20×23,5.

Вверху надпись: «Эскизъ къ живой картинѣ 1901 г.».

**(Собрание Театрального музея Грузинской ССР).**

НА ГОЛОВИНСКОМ ПРОСПЕКТЕ. ТИФЛИС. Набросок. 1902 г.

Б. тушь, перо 23,5×22.

**(Собрание М. А. Шамшинян).**

МОРСКОЙ ВИД. 1908 г.

Б. акв. 14,5×23,5.

Слева: «1908». Справа подпись: «А. Шамшиновъ».

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**



ПОРТРЕТ КН. А. Д. МЕНЬШИКОВА.

Офорт 16×12.

Справа внизу подпись: «Гр. А. Шамшиновъ».

ТИПЫ СТАРОГО ТИФЛИСА.

Б. кар. 8×5,5.

Внизу надпись: «На конкѣ въ Тифлисѣ. А. Ш.»

**(Собрание Историко-этнографического музея города Тбилиси).**

РОССИ(?) В РОЛИ ГАМЛЕТА.

Гравюра на дереве. 11×5.

Слева: «*Տատր*». Справа: «*Ա. Շամշին*».

**(Собрание М. А. Шамшинян).**

ЭСКИЗ КАРТИНЫ «ЧТЕНИЕ ЦЕРКОВНОГО УКАЗА В ДЕРЕВНЕ».

Б. акв. 29×43,5.

Справа внизу надпись: «I-ый эскизъ для картины «Кондакъ».

ПЕЙЗАЖ.

Б. акв. 8,5×25,5.

Справа надпись: «Часть имѣнія А. Казарова в Табахмелахъ 9-го августа 1908 г.».

ПОРТРЕТ СТАРИКА.

Б. акв. 22×16,5.

**(Собрание Музея искусств Грузинской ССР).**

П. ПРОШЯН. Набросок.

Б. тушь, перо. 27×18.

**(Собрание М. А. Шамшинян).**

ЛОРИЙСКИЙ ПЕЙЗАЖ.

Б. акв. 8,5×13.

Сверху надпись: «Противъ ст. Сананнъ. Горы».

ПЕЙЗАЖ.

Б. акв. 6×11,5.

ЧАСОВОЙ.

Офорт. 20×12,5.

ИМЕРЕТИН.

Ксилография. 25×18.
Справа внизу подпись: «Ա. Շամշին».

ЗАКАТ. (Пейзаж).

Б. акв. 8,5×15. Справа подпись: «А. Шамшиновъ».

---

ХОЛЛОШИ Ш. ПОРТРЕТ А. ШАМШИНЯНА. 1884 г.

Х. м. 29×21,5.
Справа внизу надпись: «Հոլլոշիից/84. Շամշինեան. Մինխէն».

ВРУБЕЛЬ М. А. ПОРТРЕТ А. ШАМШИНЯНА. 1883 г.

Б. тушь, перо. 29×23,5.
Справа внизу подпись: «М. Врубель 14-ое М. 83».



## ПРИНЯТЫЕ В КАТАЛОГЕ СОКРАЩЕНИЯ:

Х.—холст.
К.—картон.
Б.—бумага.
М.—масло.
Акв.—акварель.
Кар.—карандаш

# ՌԵՊՐՈԴՈՒԿՑԻԱՆԵՐ
# РЕПРОДУКЦИИ



ՍԱՄՈՒՐ ԳԵՏԻ ՎԵՐԻՆ ՀՈՍԱՆՔԸ: ԴԱՂՍՏԱՆ: 1886 Թ.
ВЕРХОВЬЕ РЕКИ САМУР. ДАГЕСТАН. Г.



ՓՈՂՈՑ ՄԵՅԴԱՆՈՒՄ: ՀԻՆ ԹԻՖԼԻԶ: 1887 Թ.

УЛИЦА НА МАЙДАНЕ, СТАРЫЙ ТИФЛИС. 1887 г.



ՇԵՅԹԱՆ ԲԱԶԱՐԸ։ ՀԻՆ ԹԻՖԼԻԶ։ 1890 Թ.
ШАЙТАН БАЗАР. СТАРЫЙ ТИФЛИС. 1890 г.



ՂԵՅՆՈԲԱ: 1893 Թ.
КЕЙНОБА 1893 г.



ՍԱՆԱՀԻՆԻ ԿԱՄՈՒՐՋԸ: 1899 Թ.
САНАИНСКИЙ МОСТ. 1899 Г.



ԼԵՌՆՑԻՆԵՐԻ ԴԱԴԱՐՔԸ: ԴԱՂՍՏԱՆ: 1902 Թ.
ПРИВАЛ ГОРЦЕВ. ДАГЕСТАН. 1902 Г.



ՊԵՐՃ ՊՌՈՇՅԱՆ: ՃԵՊԱՆԿԱՐ:
ПЕРЧ ПРОШЯН: НАБРОСОК.



ԵՐԿԱԹԳԾԻ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ։ 1900 թ.
НА ЖЕЛЕЗНОДОРОЖНОЙ СТАНЦИИ. 1900 г.

ՀՍՍՌ–Арм С

Կատալոգը կազմեց Պատկերասրահի ավագ գիտաշխատող
Դ. Մ. ԴՋՆՈՒՆԻՆ

Խմբագիր՝ Արվեստի վաստակավոր գործիչ
Ռ. Գ. ԴՐԱՄԲՅԱՆ

Каталог составил старший научный сотрудник
Картинной Галереи
**Д. М. ДЗНУНИ.**

Редактор—Засл. деятель искусств
**Р. Г. ДРАМПЯН.**

*Շապիկի վրա — Հ. Ի. ՇԱՄՇԻՆՅԱՆԻ դիմանկարը.*
*Գործ Մ. Ա. ՎՐՈՒԲԵԼԻ (1883 թ.)*

На обложке—портрет А. И. ШАМШИНЯНА.
Работа **М. А. Врубеля** (1883 г.)

Ե--2001
2013

ՎՖ 10737։

Պատվեր 683։ Տիրաժ 300

Գլխհրատի № 1 տպարան, Երևան, Ալավերդյանի փող. № 65, 1954 թ.։

ՀՀ Ազգային գրադարան
NL0500260

ԳԻՆԸ 2 ռ.
ЦЕНА 2 р.